

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կարապ :

Յարմարաւոր գնային կարգաւ անվեհեք,
 Նըւագելով ըզթագաւորն առեալ յերգ :
 Զերգ ձիւնաթոյր կարապէ 'ի մէջ լոյծ ամպոց
 Ածեն գեղեցիկ նըւագս ընդ ձիգ պարանոց
 Ի ճարակէ դարձեալք , և գետնն գանգէ ,
 Զայն Ասիա տայ լիճն հանեալ 'ի բացէ :

ԱՒԻԳԻՒԼ. ԵՒԷԻ. Է. 1065 :

ԲՆԱԿԱՆԻ ԹԱՆՈՒՆՆԵՐԷՆ ԵՄԼԵ ՄԱՐ-
 դուն աւելի օգտակարները ջրային
 Թանոններն են, ինչպէս Կարապը, Կարապը ու
 Կարապը, որ իրենք ալ մէկ ցեղի տակ
 կ'երթան : Ի՞նչքերնին ամենէն խո-
 շորն ու գեղեցիկը կարապն է : Կիւ
 Թանոն կայ որ բանաստեղծները վը-
 րան այնչափ խօսած ըլլան՝ որչափ կա-
 րապին վրայ . վասն զի սովորական
 խօսք է իրենց մէջ ըսելը՝ Թէ կարապը
 խիստ գեղեցիկ ձայն ունի . մանաւանդ
 երբոր մեռնիլը կը մօտենայ՝ շատ սի-
 րուն կ'երգէ կ'ըսեն : Բայց Պիւֆոն
 իր բնական պատմութեան մէջ ասանկ
 կ'ըսէ . “Հին գրքերու մէջ կարապի
 ձայնին վրայ եղած առասպելին պէս
 հաշակաւոր առասպել չկայ . Յունաց
 ազգին վառվռուն երեւակայութիւն
 ալ աս կարծիքովս անանկ պաշարուած
 էր որ ինչուան ճարտասաններն ու փի-
 լիսոփաներն ալ չէին տարակուսեր ա-
 սոր ստուգութեանը վրայ . և այնչափ
 հաճոյ եղած է աս առասպելը նաև
 ինչուան հիմա, որ երևելի մարդկանց
 մեռնելու ատեննին զրուցած խօսքե-
 րուն համար՝ այլաբանութիւն կարապի
 երգ կ'ըսենք .” : Իմանք կ'ըսեն Թէ աս
 առասպելը հնարողը Պիւթագորաս
 փիլիսոփան եղած է . վասն զի անի-
 կայ հոգեփոխութեան մոլորութիւնը
 սորվեցնելով՝ մեռած մարդկանց հո-
 գիները այլևայլ կենդանեաց փորը կը
 մտնեն , բանաստեղծներուն հոգին
 ալ կարապին փորը կ'երթայ կ'ըսէր :

Կարապը ջրին երեսը լողացած Ժա-
 մանակը շատ գեղեցիկ ձև կ'առնէ :

Ինչ իրեն ձեան պէս ճերմակ ու փա-
 փուկ փետուրները, վզին երկայնու-
 թիւնն ու սիրուն դարձուածքները,
 խիստ աղուոր տեսք մը կուտան իրեն .
 Թուշելու ու լողալու ալ շատ վարպետ
 ու յարմար է . բայց ջրին տակը մըտ-
 նել չկրնար, վասն զի մարմինը մեծ է
 ու փետուրները շատ են :

Ի՞նչին երկայնութեամբը գլուխը
 ջրին մէջ կը խոթէ կերակուր գըտ-
 նելու համար, և իրեն կերակուրը
 ջրային խոտ ու ձախ է : Շատ սրտոտ
 ալ է, ու կտուցով՝ ճանկերով ու
 Թաներով կը կռուի Թանամուշն հետ :
 Ինտանի կարապը գեղեցիկ զարդ կ'ը-
 նէ աւազաններու և արհեստական
 լճերու մէջ : Կ'ըսեն Թէ ձկներուն
 ամենեւին փնաս չըներ, հապա նաև
 կը պաշտպանէ զանոնք :

Եւրոպայի արևելեան կողմերը բոյ-
 նը լճերու մէջ կը շինէ խիտ եղէգնե-
 րով ու խոտերով պզտիկ բլրակի վր, և
 կամ ծռած եղէգներու վրայ, և հոն
 արմատներ՝ ճիւղեր ու խոտեր կը դի-
 զէ ու զարմանալի կերպով կը յարմար-
 ցնէ, բոլորն ալ լճին տակէն Ժող-
 վելով : Իմէն տարի նոյն բոյնին մէջ
 կ'ածէ հաւկիթները՝ Թէ որ բոլորու-
 վին չէ աւրուած . ու Թէ որ նորոգու-
 թիւն մը պէտք է նէ կ'ընէ : Հինկէն
 ինչուան ութը հատ հաւկիթ կ'ածէ,
 և գրեթէ վաթսուն օր Թուխտի կը
 նստի . հաւկիթին մեծութիւնը սա-
 գի հաւկիթին կրկինն է, իսկ գոյնը
 բաց կանանչի կը զարնէ : Ինչուան հա-
 րիւր տարի կ'ապրի կ'ըսեն . բայց ծե-
 րացածին միսը անհամ է :

Ի՞նչ որ սագ մը կամ ուրիշ կարապ
 մը իր բոյնին քովերը բոյն չինէ, ամէն
 հնարք կ'ընէ որ անիկայ հեռացնէ :
 Երկու արու մէկմէկու դէմ կ'ելլեն
 ու չարաչար կը կռուին . Թէ որ չկա-
 րենան իրարու յաղթել, երկուքն ալ
 լճին մէջմէկ կողմերը կը քաշուին՝
 հանգիստ կը բնակին, ու կարծես Թէ
 իրենց մէջմէկ սահման մըն ալ կ'որո-
 շեն, այնպէս որ ետքը յանկարծ Թէ
 որ մէկը մէկաւրն սահմանը անցնի՝



Բար, Սառ և Կարապետ :

նորէն կռիւ կը բացուի մէջերնին :

Արպատմեն թէ կարապին մէկը թուխս նստած ատենը տեսեր է որ աղուէս մը լողալով իրեն կը մօտենայ . մէկէն 'ի մէկ ցատքեր է վրան , թւերովը լաւ մը ծեծելէն ետքը՝ ջրին տակը խոթեր է երկար ատեն որ խղզուի : Թէ որ տեսնէ թէ թշնամեոյն չկրնար յաղթել , ձագերը թւերուն վրայ առած կը փախցնէ :

Այրի կարապը ընտանիէն քիչ մը պզտիկ է . ասոր ալ փետուրները ճերմակ են , բայց թւերը մոխրագոյն : Հիւսիսային կողմերը օդոստոս ամսուն մէջ ասիկայ որսալու կ'ելլեն . վասն զի ան ատեն փետուրները թափած ըլլալով աւելի դիւրաւ ձեռք կ'իյնայ : Այն թուերու ատենը սուր ձայն մը կը հանէ , որ շատ անախորժ է . կ'երենայ թէ կարապին ձայնին վրայ եղած առասպելը աս վայրի տեսակին համար է :

Սագի ու բադի տեսակներուն վրայ ուրիշ անգամ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Այաւէն փայտոյ :

ԵՐԻՈՊԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ և քաղաքական յառաջագիմնութեանը մեծ պարծանք ու նախանձելի վիճակ է , որ գիտութեանց ու արհեստից հետ մէկ տեղ դաստիարակութիւնն ալ ծաղկեցնելու ետեւէ կ'ըլլան , մանաւանդ քսան տարիէ մը 'ի վեր : Այս բանիս յայտնի ապացոյց են ոչ միայն տղոց դաստիարակութեան վրայ եղած գըրքերուն շատնալը , հապա նաև բոլոր Եւրոպայի ամէն կողմերը տեսակ տեսակ դպրոցներ , ուսումնարաններ , կըրթարաններ բացուիլը : Այն դպրոցներուն մէջ ալ մասնաւոր կերպով մը մարդուս աչքին կը զարնեն Այաւէն տղայոց ըսուած դպրոցները , որոնց

վրայ օրագրիս մէջ ուրիշ անգամներ ալ տեղեկութիւն տուինք :

Նոս գրաբառ թարգմանած կը դնենք հիմա ան սրտաշարժ ու իմաստուն ճառը , որ Ա Ենետիկի Այաւէններուն հոգաբարձուաց Ժողովոյն նախագահը , մեծանուն կոմսը՝ Աիկոյայոս Փրիուլի , տարեկան հանդիսին մէջ քաղաքիս մեծամեծներուն առջևը խօսեցաւ անցած տարի յունիսի 24^{ին} :

ՅԵԼԱՆԵԼ Իմում առաջի ձեր , ո՛վ բարձրապատիւ Արքայազն , վսեմապատիւ Տէր , գերապատիւ կոմս Աաղաքապետ , մեծապատիւ Աազանի , տեարք և տիրուհիք , յեւանել Իմում առաջի ձեր զայս չորիցս անգամ պաշտպան Այաւէնի տղայոց 'ի հայրենիս մեր , և յառնուլ յառաջարկութիւն բանիս եթէ կարևոր իցէ յոտին ունել զայնոսիկ 'ի Ա Ենետիկ , երկնչիմ մի գուցէ զեղծանիցիմ ինչներողամիտ քաղցրութեամբ ձերով , զորոյ յայլ նուազս առեալ եմ զքաղցր փորձ . և միանգամայն մի գուցէ ստուերածս ինչ ածից առատաձեռն բարերարութեանդ ձերոյ , որով ցայսօր բարգաւաճ կացուցիք զայսպիսի գովելի սահմանադրութիւն : Այլ քանզի հիմն հաստատութեան բանից իմոց էնոյն ինքն ձերոյն բարերարութիւն , ապա ըզհետ գայ զի խորհուրդք մտաց իմոց թարգման իցեն ցանկութեանց ձերոց , և բանք իմ ոչ այլ ինչ՝ բայց եթէ մեծաձայնագոյն նուէր երախտագիտութեան բարերարութեանդ ձերոյ : Արդ 'ի լրութիւն չափաւորութեանդ՝ թոյլ տուք զի տառապեալ ծնողք մատուցեն ձեզ օրհնութիւն և գովութիւն երախտագէտ սրտից ընդանարուեստ շրթունս իմ , և շնորհեցէք ինձ զլսողութիւն ձեր 'ի տեսիլ յաղթանակի առատաձեռնութե՛ ձերոյ որ խռնեալ կայ շուրջանակի :

Օպահպանութիւն Այաւէնի տղայոց 'ի Ա Ենետիկ ամենայն իրօք